ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«07» մայիսի 2010թ. N - Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010 թվականի ծրագրի վերաբերյալ» N 55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 28-րդ կետի 2-րդ ենթակետը «որոնց նկատմամբ դեռևս չի գրանցվել Երևան համայնքի սեփականության իրավունքը» բառերից հետո լրացնել «և սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով Երևան համայնքին նվիրված կամ նվիրաբերված գույքը» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N 55-Ն որոշմամբ հաստատված «Երևան համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010 թվականի» ծրագրով նախատեսվել է օտարել այն գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում էր Երևանի նախկին թաղային համայնքներին, և ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով՝ մինչև Երևան քաղաքի ավագանու 23.12.2009թ. N 55-Ն որոշման ընդունումը, Երևան համայնքին անհատույց սեփականության իրավունքով հանձնված գույքը:

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի N 309-Ա որոշմամբ ՀՀ սեփականությունը հանդիսացող (պետական գրանցման վկայական՝ N 2541286, տրված՝ 10.06.2009 թ.) Երևան քաղաքի Ա. Սարգսյան 8 հասցեում գտնվող՝ 637.5 քառ. մետր մակերեսով՝ չորրորդ աստիճանի վնասվածությամբ շենքը և դրա սպասարկման ու օգտագործման համար անհրաժեշտ 0.047508 հեկտար հողատարածքը նվիրվել է Երևանի քաղաքային համայնքին:

ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 418-Ն որոշմամբ Երևան քաղաքի Մարգարյան փողոցի N 37՝ քանդման ենթակա վթարային բազմաբնակարան շենքից վերաբնակեցման ենթակա ընտանիքների բնակարանային խնդիրները լուծելու նպատակով պետական բյուջեով Երևանի քաղաքապետարանին հատկացված միջոցներով կառուցված՝ Երևան քաղաքի Քանաքեռի 14-րդ փողոցի N 38/1 բազմաբնակարան շենքը և 1365,14 քառ. մետր մակերեսով հողատարածքը նվիրաբերվել է Երևան քաղաքին՝ նշված ընտանիքների բնակարանային խնդիրները լուծելու պայմանով:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտություն է առաջացել ՀՀ կառավարության կողմից նվիրված և նվիրաբերված գույքը ներառել Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N 55-Ն որոշմամբ հաստատված ծրագրում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N 55-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. Բ Ե Գ Լ Ա Ր Յ Ա Ն